ՀՀ ՓՊ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

11.06.2015 12:53

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ՇԴ2/0004/01/15 քրեական գործով փաստաբան Լիանա Բալյանը իրականացնում է ամբաստանյալ՝ Մանվել Ինգլիզի Վարդանյանի պաշտպանությունը, ով մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 242 -րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ:

2015 թվականի մայսիսի 14-ին նշանակված հերթական դատական նիստի ժամանակ փաստաբան Լիանա Բալյանը Շիրակի մարզի դատախազի տեղակալ, գործով մեղադրող՝ Ա. Ավետիսյանին բացարկ է հայտնել:
Դատավոր՝ Ա. Մանուկյանը, փաստաբանի միջնորդությունը քննարկելու և որոշում կայացնելու նպատակով հայտարարել է ընդմիջում և հեռացել խորհրդակցական սենյակ: Այդ ընթացքում փաստաբան Լիանա Բալյանը դուրս է եկել դատարանի դահլիճից և փորձել է գնալ դատարանի գրասենյակ, որտեղ դատավարության որոշ մասնակիցներ, անծանոթ անձանց հետ միասին հարձակվել են փաստաբանի վրա, վերջինիս նկատմամբ՝ մասնագիտական պարտականությունները կատարելու կապակցությամբ սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ հնչեցրել:
Փաստաբան Լիանա Բալյանի անվտանգությունը հնարավոր է եղել ապահովել միայն դատական կարգադրիչների միջոցով, ովքեր շրջապատելով փաստաբանին բարձրացրել են դատարանի երկրորդ հարկ:
Միջադեպի վերջին պահը նկարահանվել էր «Առավոտ» թերթի լրագրող՝ Նունե Արևշատյանի կողմից: Մինչ 18:00-ն տևած դատական նիստի ողջ ընթացքում կարգադրիչներն ապահովել են փաստաբան Լիանա Բալյանի անվտանգությունը:
15.05.2015թ. նշանակված հերթական դատական նիստին փաստաբանը չի մասնակցել՝ մտահոգված լինելով իր անվտանգության մասին:
Հարձակման դեպքի առթիվ և մամուլում տարածված հաղորդագրության հիման վրա՝ Շիրակի Մարզի դատախազ Ր. Ասլանյանը ցուցում է տվել Գյումրու Մուշի ոստիկանության բաժնում կատարել հետաքննություն:
ՀՀ քրեական օրենսգրքի 323^3-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում փաստաբանի կամ նոտարի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի համար՝

կապված նրա լիազորությունների իրականացման հետ:
«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Փաստաբանը չպետք է նույնացվի իր վստահորդի հետ' ելնելով փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարումից»:
ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը խորը մտահոգություն հայտնելով փաստաբան Լիանա Բալյանի կողմից իր մասնագիտական պարտականությունները անարգել կատարելու իրավունքի խախտման փաստով, կոչ է անում պետական լիազոր մարմիններին կատարվածի կապակցությամբ իրականացնել լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն և պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց:

ՀՀ Փաստաբանների պալատի
Փաստաբանների իրավունքների պաշտպանության
հանձնաժողով

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })